Հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
պրոֆեսոր Սրբուհի Գևորգյան

ԿԱՐԾԻՔ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թ. հունիսի 10-ի նիստի

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ. Ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, պատմական գիտությունների թեկնածու Մ. Բաղալյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Պապոյանը:

ԼՍԵՑԻՆ. Լիանա Ռուբենի Պետրոսյանի «**Ներքաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013 թթ.)**» պատմական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսության քննարկումը (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Մ. Իսկանդարյան):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը:

Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Լիանա Ռուբենի Պետրոսյանի «**Ներքաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013 թթ.)**» ատենախոսության թեման արդիական է, ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն:

Մահմուդ Ահմադինեժադը Իրանում նախագահի պաշտոնում ընտրվել է երկու անգամ՝ կառավարելով 2005-2013 թթ.: Նրա կառավարման շրջանը աչքի էր ընկնում ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքաղաքական դժվարություններով ու փոփոխություններով: Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Մ. Ահամդինեժադի կառավարման շրջանում Իրանի կառավարական

վերնախավում ի հայտ եկան հակադրություններ, երբ Մ. Ահմադինեժադը փորձեց սահմանափակել հոգևոր առաջնորդի լիազորությունները, Իրանի նկատմամբ կիրառված արևմտյան պատժամիջոցներով պայմանավորված վատթարացավ ներքաղաքական իրադրությունը, ինչպես նաև կրկին գլուխ բարձրացրեցին էթնիկական խնդիրները: Վերոնշյալի համատեքստում ատենախոսը կարողացել է ներկայացնել ու հիմնավորել թեկնածուական ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսը հիմնավորել է նաև հետազոտության գիտական նորույթը: Այստեղ կարող ենք առանձնացնել երկու հիմնական մոտեցումներ՝ առաջինը, որ Մ. Ահմադինեժադը փորձում էր փոխել իսլամական կառավարման բնույթը և Իրանում հաստատել աշխարհիկ հանրապետություն, մյուս կողմից նշվում է կրոնագաղափարական հենքը, որը որոշիչ ազդեցություն է ունեցել նրա ներքաղաքական առաջնահերթությունների ձևավորման վրա:

Ատենախոսը հստակորեն ձևակերպել է հետազոտության նպատակը և խնդիրները՝ իրավացիորեն նշելով Մ. Ահմադինեժադի քաղաքականության գերակայությունները, որոնց համատեքստում նոր ազդակներ են հաղորդվել նաև Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններում:

Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն՝ փաստաթղթեր, հարցազրույցներ, համացանցային նյութեր, հայ, իրանցի և օտարազգի հեղինակների աշխատություններ: Նորագույն շրջանին վերաբերող թեմաների ուսումնասիրությունը դժվարություն է ներկայացնում այն առումով, որ որոշ գործընթացներ դեռևս տեղի են ունենում և ավարտուն տեսք չեն ստացել, ուստի այս տեսանկյունից գրականության հավաքը, վերլուծումն ու մշակումն ունեն որոշակի դժվարություններ: Սակայն հարկ է նշել, որ ատենախոսին հաջողվել է այս առումով կատարել արդյունավետ աշխատանք:

Պետք է նշել ատենախոսության թեմայի կիրառական նշանակության մասին: Այն օգտակար հետազոտություն է ոչ միայն իրանագետների, պատմաբանների, միջազգայնագետների, այլև ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության համար, քանզի հարևան ԻԻՀ-ում տեղի ունեցող ներքին ու արտաքին քաղաքական գործընթացները թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ անվտանգային առումներով կարևոր են ՀՀ-ի համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակը համակարգված ներկայացրել է թեմայի ուսումնասիրման արդիականությունը, կարևորությունը, առաջադրված խնդիրները, նպատակները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանը (2005-2009)», ներկայացված է նշված ժամանակաշրջանում Իրանի քաղաքական, սոցիալական և տնտեսական իրադրությունը: Այս գլխում հեղինակն անդրադառնում է նաև Մ. Ահմադինեժադի ազգայնական գաղափարներին և իրանական ազգայնականության վերելքին:

Երկրորդ գլխում՝ «Մահմուդ Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանը (2009-20013)»՝ նախ ներկայացվում է Իրանում Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները, մասնավորապես՝ Կանաչ շարժումը: Այնուհետև անդրադարձ է կատարվում Կանաչ շարժմանը հետևած Մ. Ահմադինեժադի համակարգային փոփոխություններին ուղղված քաղաքականությանը, որը սակայն, ինչպես ճիշտ է նկատում ատենախոսը, լուրջ հաջողություն չունեցավ: Այս գլխի վերջում հեղինակը խոսում է Իրանի ներքաղաքական իրադրության վրա իրանական միջուկային խնդրի ազդեցության մասին: Այստեղ մատնանշվում են այն բոլոր դժվարությունները, որոնց ստիպված էր դիմակայել Իրանը տնտեսական պատժամիջոցների պատճառով:

Երրորդ գլխում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության և էթնիկ խնդիրները Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում», ներկայացվում են Իրանի առջև ծառացած՝ մարդու իրավունքերի, խոսքի ազատության և էթնիկական խնդիրները (քրդական հիմնախնդիր, պանթուրքիզմ և այլն): Գովելի է ատենախոսի կողմից առանձին ենթագլխով Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին իրանահայ համայնքին և Իրանում Հայոց ցեղասպանության խոսույթին անդրադարձը:

Եզրակացությունների բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Նիստի մասնակիցները դրական գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և պատասխանատու աշխատանքը՝ միաժամանակ արտահայտեցին մի քանի դիտողություններ և նկատառումներ, որոնց հաշվի առնելը կարող է հետագայում օգտակար լինել աշխատանքի լրամշակման գործում.

1. Ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար բարեփոխիչներին ու պահպանողականներին՝ ներկայացնելով նրանց գաղափարները և ներքին քաղաքականության վերաբերյալ հիմնական ծրագրերն ու մոտեցումները: Նույն կերպ կարելի էր ատենախոսության առաջին գլխի երրորդ

ենթագլխում փոքր-ինչ ավելի խորությամբ ներկայացնել իրանականությունը, ինչպես նաև իրանական ազգայնականության հայեցակարգը:

2. Ատենախոսը գրեթե չի անդրադառնում գյուղատնտեսության ոլորտում Մ. Ահմադինեժադի առաջ քաշած ծրագրերին և ընդհանրապես այս ոլորտում առկա խնդիրներին և դրանց ուղղված քաղաքական լուծումներին:

3. Երրորդ գլխում՝ «Մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունը ԻԻՀ-ում Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում», կարելի էր կանանց վերաբերող խնդիրներին անդրադառնալ առանձին ենթագլխով՝ դա ներկայացնելով Իրանում տեղի ունեցող ներքաղաքական փոխակերպումների ետնախորքի վրա:

4. Կենտրոնանալով Ահմադինեժադի վրա, քիչ ուշադրություն է դարձվել ներքաղաքական հարցերում երկրի հոգևոր առաջնորդի դերակատարությանը, որն իրականում բավականին մեծ է:

5. Հաշվի առնելով Իրանի ներքաղաքական կյանքում էներգետիկ գործոնի դերը՝ հեղինակը պետք է խորությամբ անդրադառնար դրան:

6. Անդրադառնալով Իրանի կողմից հայոց ցեղասպանությունը պաշտոնապես չճանաչելու գործոններին, հեղինակը գրում է. «Հայոց ցեղասպանության ճանաչումը ենթադրում էր հրեական Հոլոքոստի ճանաչում, ինչն անշուշտ հակասում էր Մ. Ահմադինեժադի հակահիսրայելական քաղաքականությանն ու հայտարարություններին» (էջ 152): Ամբիոնի կարծիքով, Հայոց ցեղասպանության պաշտոնապես չճանաչելը Իրանում որևէ կերպ չի կարելի կապել Հոլոքոստի չճանաչման հետ: Կան այլ պատճառներ: Ավելին հեղինակն ինքն է գրում, որ Հոլոքոստի չճանաչումով Հայոց ցեղասպանության չճանաչելը պայմանավորելը հակասում էր Մ. Ահմադիննեժադի քաղաքականությանն ու հայտարարություններին: Իսկ եթե հեղինակն, այնուամենայնիվ, պնդում է իր տեսակետը, պետք է հիմնավորեր այն:

7. Ցանկալի կլիներ, որ ատենախոսության գրականության ցանկում սկզբում նշվեին պաշտոնական փաստաթղթերը, հետո՝ մնացածը, ճիշտ կլիներ նաև օգտագործված գրքերի ցանկը ներկայացվեր ըստ լեզուների՝ հայերեն, անգլերեն, պարսկերեն և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, քննարկելով Լիանա Ռուբենի Պետրոսյանի «Ներքաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013 թթ.)» խորագրով թեկնածուական ատենախոսությունը, գտնում է, որ այն լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող

պահանջներին, ուստի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի 006 մասնագիտական խորհրդում, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
պ. գ. դ., պրոֆեսոր, Խ. Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտ.քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Մ. Իսպիրյան

10. 06. 2022 թ.